ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3301, ք. Կապան, Չարենցի 1
հեռ. /+37460/720072
էլ.փոստ kapanmayor@gmail.com, info@kapan.am

3301 г.Капан, Чаренца 1
тел. /+37460/720072
e-mail: kapanmayor@gmail.com, info@kapan.am

24 մարտի 2026թ. N Ե-11/1069

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ N «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԽԾՁԲ-25/09/01» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կապանի համայնքապետարանի՝ ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի (այսուհետև նաև Պատվիրատու)՝ մի կողմից, և «Սամալիա» ՍՊԸ՝ ի դեմս տնօրեն Արմեն Ավետիսյանի (այսուհետև նաև Կատարող)՝ մյուս կողմից, միջև 2025 թվականի նոյեմբերի 24-ին կնքվել է համայնքի կարիքների համար շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների N «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԽԾՁԲ-25/09/01» ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետև նաև Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը և սահմանել ողջամիտ ժամկետ ոչ պատշաճ ծառայությունը պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան (անհատույց) պատշաճ մատուցելու և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքն ու 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝

Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Պայմանագրի 5.2 համաձայն՝

Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Կատարողը պարտավոր է իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն՝ համաձայն քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ. թիվ 44 «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանում բերված դրույթների՝ ապահովելով Ծառայությունը մատուցողի կողմից նշանակված *տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում*, այդ թվում՝ ծածկման շինմոնտաժային աշխատանքներին, ընդ որում՝ Ծառայությունը մատուցողին տրված լիցենզիայի ներդիրներում ընդգրկված պատասխանատու անձինք պետք է պարտավորություն կրեն Ծառայություն մատուցման ընթացքին սահմանված կարգով /գրաֆիկով/ մասնակցություն ունենալու համար: Տվյալ շինարարական տեղամասում նշանակված *տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Ծառայություն մատուցողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն*: Կատարողը պարտավոր է նաև հսկել շինարարական աշխատանքների ընթացքը՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին համապատասխանությունն ապահովելու նպատակով, պարբերաբար լուսանկարահանել շինարարության օբյեկտի վիճակը, կատարել *որակի և կատարված ծավալի ամենօրյա հսկում*, կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի տեխնիկական հսկման համար և այլն:

2026 թվականի մարտի 10-ին Կապանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետը զեկուցագիր է ներկայացրել այն մասին, որ «Սամալիա» ՍՊԸ պատշաճ կարգով չի կատարել պայմանագրային պարտավորությունները, մասնավորապես՝ չի իրականացրել ամենօրյա տեխնիկական հսկողություն շինարարական օբյեկտներում: 2026 թվականի փետրվարի 3-ի N-07/310 գրությամբ Կատարողը տեղեկացվել է պարտավորությունների չկատարման և դրանից բխող հետևանքների մասին:

Վերոշարադրյալի հիման վրա և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետը և պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետը և 2.1.3 կետի «ա» ենթակետը՝ Կապանի համայնքապետարանը միակողմանի ամբողջությամբ լուծում է Կապանի համայնքապետարանի և «Սամալիա» ՍՊԸ միջև 2025 թվականի նոյեմբերի 24-ին կնքված՝ Համայնքի կարիքների համար շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման N «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԽԾՁԲ-25/09/01» ծածկագրով գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդող օրվանից:

«Սամալիա» ՍՊԸ-ին տրվում է ժամկետ մինչև 2026 թվականի մարտի 28-ը (պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը) սահմանված տուգանքը՝ 8086,5 ՀՀ դրամ, ինչպես նաև պայմանագրի ապահովման գումարը ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900315201120 հաշվեհամարին վճարելու համար:

Միաժամանակ, «Սամալիա» ՍՊԸ-ին պարզաբանվում է, որ սահմանված ժամկետում վերը նշված գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ «Սամալիա» ՍՊԸ տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Ծանոթություն.

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 29-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն ենթակետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝

տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կայացման հնարավորությունը չի վերացել: Եթե՝

ա. սույն ենթակետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին,

բ. մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան լիազորված մարմնի կողմից մասնակցին ցուցակում ներառելու համար սահմանված քառասնօրյա ժամկետը լրանալը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ